խարհի Կիլիկեցւոց. մինչ կանայքն եւս գրէին եւ ընթեռնուին:

«Ի հին պատմութեան Սսոյ լուայ, թէ Բարձրաբերդցի Կոստանդին քահանայի դուստր Զապէլ կոչեցեալն պաշտէր զմանրուսումունս, եւ էր հմուտ ընթերցողութեան եւ արուեստին գրչութեան»:

«Ըստ այսմ օրինակի ասեն, թէ էր կոյս մի ի Տարսոն, եւ անունն Ալիծ, եւ որ նա էր գրագիր յոյժ հմուտ: Գրեաց զայրուբենս եւ ասաց, թէ ով ոք որ սմա նմանեցնէ, նա է իմ տեսոյն արժանի: Որ եւ գրեալ՝ բերեն զերկուքն, ոչ հաւանեալ ասէ՝

«Ծայրն Զային, Ծակն Ծային
«Ձի նմանիր գիրն Ալիծին»:

Եւ դարձեալ ասէ վասն ուղղացն, թէ ով որ գրէ

«Ծայրն Զային, Ծակն Ծային
«Նա կու լինի փեսայ Ալիծին»:

* * *

Հ. Ղեւոնդ Ալիշան կը յիշէ մէկ ուրիշ Ալիծ եւս, որ էր «Կին Սենեկալին Կիպրոսի», որ «տայր գրել աւետարանս եւ կտակարանս ձեռամբ ճարտար ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԳՈՅՆ-ԵՐԻՑԱՆՑ»:

*

Շահ-Խաթունեան հին գրչագրի մը մէջէն արտագրեր է Ժ. դարէն առաջուան հայկական բանակի կազմի ծրագիր-պլանը: Այս վերջին ատինճանի հետաքրքրական վաւերագրին գրչագրողը մի տիկին է, անունն ալ ՏԻՐԱՄԱՅՐ, որ կը կարծուի — կ'ըսէ Ալիշան — «քահանայի մը մայրը լինի»:

*

ՍԻՄԼՈՆ անունով մէկ ԳՐԻՉ եւ ԾԱՂԿՈՂ 1335ին սկսեր է գեղագրել «Ճառընտիր» մը Կիլիկիոյ ԳԱՆՁԷ ամրոցին մէջ, որը յետոյ շարունակեր եւ աւարտեր է իր քոյրը՝ ՃՈՀԱՐ, Խոզկրտի գիւղի Ս. Հոգի եկեղեցիին համար:

*

1637-ին Մարիանէ անունով մէկ կոյս եւս արտագրեր է Յակոբ Ղրիմեցու «Օրացոյցին մեկնութիւնը»:

*

1650-ին մէկ ուրիշ Մարիանէ ալ, Արկոչ գիւղին մէջ արտագրեր է մէկ «Վարք Հարանց Անապատականաց»:

*

1653-ին Հալի Ձորի Սուրբ Կոյս Աստուածածին վանքին մէջ քոյր Հռիփսիմէ արտագրեր է մէկ «Մեկնութիւն Ժամագրքի» մէկ «Նարեկացի» եւ մէկ ալ «Խորհուրդ Մեծն» մը:

*

1655-ին, ԿՈՅՍ ՎԱՌՎԱՌԷ արտագրեր է «Ժամագիրք» մը, ուր կայ Աստուածածնի երեւումը Սր. Գրիգորին:

*

1657-ին ՎԱՐԴԵՆԻ անունով ապաշխարող մը արտագրեր է «Սանդուխտի գիրքը»:

*

Շնհերի վանքին մէջ ՔՈՅՐ ԼՐԻՆԷ 1673-ին արտագրեր է մէկ «Ատեանի Ժամագիրք»:

*

Նոյն 1673-ին, ՔՈՅՐ ՄԱՐԻԱՄ արտագրեր է Գրիգոր Տաթեւացու մէկ «Ոսկեփորիկ»:

*

1684-ին ԿՈՅՍ ՎԱՌՎԱՌԷ Փոքր Սիւնեաց վանքին մէջ արտագրեր է Գրիգոր Տաթեւացու «Ճառընտիր Քարոզները»:

*

1688-ին Շոռոտի (Հին Շակատ) Ս. Կոյս Աստուածածին վանքին մէջ ՔՈՅՐ ԳՈՀԱՐԻՆԷ կամ ԳՈՀԱՐ արտագրեր է Գրիգոր Նարեկացիի «աղօթից գիրքը»:

*

Այս միեւնոյն վանքին մէջ ՔՈՅՐ ՇՈՒՇԱՆ 1664-ին արտագրեր է «Խորենացիի» եւ «Եղիշէի» պատմութիւնները:

*

1773-ին ԲՐԱԲԻՈՆ արտագրեր է Ալեքսանդր Գալամատոյի «Les forets des nouvelles meditations» գիրքը:

*

Մի ապաշխարող ՀԵՂԻՆԷ եւս նոյն տարին արտագրեր է «Ղուկասի Աւետարանին մէկ մեկնութիւնը»՝ ըստ Իգնատիոս վարդապետի:

*

ՅՈՒՍՏԻՆԷ անունով կոյս մը արտագրեր է «Անաստաս Երէցի աղօթքները», «Սր. Եփրեմի աղօթքները» եւ մէկ ալ «Ժամագիրք»:

* * *